ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատվաստումներում ընդգրկվածության 2012-2019թթ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արագածոտնի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշներն Արագածոտնի մարզում, %

2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 0,2%-ով և կազմել է 92,1%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 0,8 %-ով՝ կազմելով 96,2%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,5%-ով՝ կազմելով 98,4%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Աշտարակի ԲԿ» ՓԲԸ-ում (76,9%), «Արտենիի ԱԿ» ՀՈԱԿ-ում (85,7%) և «Ապարանի ԲԿ» ՓԲԸ-ում (87,3%) (Աղյուսակ 1):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 1,7%-ով և կազմել 92,1%, 2 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,4%-ով և կազմել 96,2%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Արագածոտնի մարզում՝ 35,6%:

Ստորև ներկայացվում է Արագածոտնի մարզում պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Արագածոտնի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի